

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.

Վեցամսեայ 6 ֆր.

ԱՐՏԱՍՈՒՄԱՆ

Երկու ֆիլիպսի օրացույց

Տարեկան 14 ֆր.

Վեցամսեայ 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ


Տարեկան 2.60 օգար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Ծանոցման տողը

20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՆԱ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du Journal

«Gravounk»

ВАРНА (Чп парие

Редакция

на ВѢСТНИКЪ

«Ир вунк»

ВАРНА

Գրողները ետ չեն

տրոշիր

ՀԱՐՍԱՆԻՔ

Տ. ԱՐԻՍ ԳՈՐԹԵԹԵԱՆԵՆ, ընդ ՕՐ, ՍԱԼԵՆԻԿ ԱՐԳԱՐԵԱՆԻ պատկի արարողութիւնը կատարեցաւ այս կիրակի գիշեր Վառնայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանդիսականաց թափօրը առաջնորդեցաւ Սահակեան սրահը, ուր տեղի ունեցան շնորհաւորական ընդունելութիւնը եւ խորհրդարանի ընտրելոց ընտրելոց զարմարութիւնը:

ՇՆՈՐՀԱԿԱՆԻՔ

Ամուսնութեան անթիւ հեռագրաւ մեզ շնորհաւորող մեծարոյ բարեկամներուն խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ: Բարեմտութեամբ շնորհաման բերկառիկ հանգստեան իրենց ընտանիքին:

Արիս Գորթեթեան

31 յուլիս 1906

Վառնա

ՄԵՐ ԹԵՐԹՈՆԸ

ԱՌԱՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրաւունքի ներկայ թուով կը սկսինք Արմէն Շիտանեանի մէկ նոր պատմական վիպասանութիւնը, Առաջակալեմք, որ ազգային և հայրենական կեանքէ առնուած ըլլալով, ամեն Հայու համար հետաքրքրող անուշութիւն մը ունի ու կը գերազանցէ հեզինակին նախորդ գործերը որոնք աւստի մեր ընթերցողները իրարմանալով կը կարգաւորեն: Այսինքն այդ կեդրոնական ժողովը պիտի կրնայ որոշել թէ ինչ թիւ կազմելու են պատգամաւորները և ասոնց որչափը պէտք է եկեղեցական ըլլայ:

ԴՈՒՍԱԼԱՄԱՆ ԿԵԴՐՈՆ. ԺՈՂՈՎՐ

Այդ ժողովը պիտի բացուի ամսոյ 15ին: Ժողովին անդամոց ընտրութիւնները կը կատարուին փութով: արդէն շատ տեղեր ընտրած են իրենց պատգամաւորները:

Այդ կեդրոն. ժողովին իրաւասութիւնները գծող ու սահմանող կաթողիկոսական կոնդակներուն դէմ բողոքող 14 միաբաններէն տասը իրենց բողոքը ետ առած են ու միայն սա կետին մէջ սահմանափակած են իրենց պահանջը թէ եկեղեցականներն ալ որոշ չափով իրենց ներկայացուցիչները ունենան այդ ժողովին մէջ: Յայտնի է թէ Վեհ. Կոթողիկոսին կոնդակները չէին արգիւրդել եկեղեցականներու մասնակցութիւնը, ոչ ալ ուրիշ ունէ գտակարգի մը ներկայացուցչին մուտքը: հետեւեալ մեր եկեղեցականները կրնային ապահով ըլլալ թէ ժողովուրդը իր քուէներովը պիտի պատուէ այն եկեղեցականները որոնք իրենց անցեալով ու արժանիքով համակրելի եղած են: Բայց որոշ թուով եկեղեցական երեսփոխաններ անպատճառ ընտրուելու պահանջը չէր կարելի, զէթ առ այժմ, գործնական համարել, ոչ ալ նրբին նախատեսութիւններու ակնկալու ըլլալ աժմէն, քանի որ կոնդակներու տրամադրութիւնները առժամանակեայ էին և ամեն խնդրոյ համար վերջնական որոշումները գումարուելիք կեդրոնական ժողովին իրաւասութեանը յանձնած է: Այսինքն այդ կեդրոնական ժողովը պիտի կրնայ որոշել թէ ինչ թիւ կազմելու են պատգամաւորները և ասոնց որչափը պէտք է եկեղեցական ըլլայ:

Սա տեսակետով միայն մենք համակարծիք ենք բողոքող կողմին թէ զուտ կրօնական հարցերու կարգադրութեան մէջ մեր եկեղեցական հայրերը իրենց անկաշկանդ ազատութիւնը վայելելու են, և բնաւ թոյլատրելու չէ որ ռուսահայոց աշխարհական պատգամաւորները որոնք անշուշտ հսկայ մեծամասնութիւնը պիտի կազմեն կեդրոնական ժողովին իրաւունք ունենան Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ ընդունած կանոններուն ու ծէսերուն մէջ փոփոխութիւններ ներմուծելու:

Այդ տեսակ իրաւունք մը պէտք է զլացուի այն կեդրոն. ժողովին որ միայն ռուսահայոց ներկայացուցիչը ըլլալով, չէ կարող ամբողջ Հայ ազգին լիազօրը կամ եկեղեցւոյն բարեկարգիչը նկատուել: Կամ իբր այն գործել, իրաւ է թէ մեր եկեղեցին ինչ սնչ բարեկարգութեան պէտք ունի, բայց այդ բարեկարգութիւնները եկեղեցական ընդհանուր ժողովոյ վերապահեալ պէտք է մնան:

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏԸ ՄԱՀՍԻԱՆ ՄՕՏ

Հետեւեալ հեռագիրները ցոյց կուտան թէ Սուլթանին մեռած ըլլալու լուրը կանխահաւ է, բայց միեւնոյն ատեն կը հաստատեն թէ նոյն լուրը Պոլսոյ մէջ ալ տարածուած է, և անիկա իր մահուան օրերուն մերձ կը գտնուի: Արդէն քանի մը շաբաթ առաջ Գերմանիայէ բերուած երկու ականաւոր բժիշկներ տեղեկագիր տուած էին թէ Սուլթանի կեանքը յառաջիկայ սեպտեմբերէն անգին չը կրնար տեւել:

Պոլիս 11 օգոստ.

Սուլթանը երկար ատենէ ի վեր հիւանդ էր, բայց իր հիւանդութիւնը գաղտնի կը պահուէր: Յուլիս 26 ին, կը խօսուէր Սուլթանին անհանգստութեան մասին, սակայն Ն. վեհափառութիւնը ներկայ գտնուեցաւ Սէլամըզի արարողութեան, Օգոստոս 3ին Սուլթանին առողջական վիճակը ծանրացաւ, երբ մզկիթ կը մտնէր Սուլթանը ինքզինք հիւանդ զգաց ու իր շուրջը գտնուողները անոր օգնութեան հասան: Սէլամըզի արարողութեանէն յետոյ տօթօր նազիմ փաշան պալատ կանչուեցաւ եւ հաստատեց թէ Սուլթանը կուրծքի անժեմէն մը կը տառապէր: Գանի մը Էմմէխիօնէ յետոյ, Սուլթանի վիճակը մեղմացաւ օրէ օր: Ուրիշ զրոյցը մը նայելով, երկամուսնիք հին հիւանդութեան մը նշաններ կը տեսնուէին, որոնք գործողութիւն մը [օքսիտոսիօն] կը պահանջէին:

Մինչեւ կէս օր Սէլամըզի արարողութեան յետաձգուելու մասին տեղեկութիւն չկար, այդ մասին դեռ պահանջանք մարմնոյն իմաց չէր տրուած: Միայն կէս օրին էր որ Սուլթանին թիկնապահը հաղորդեց զեօպաններուն:

Թէ Ն. վեհափառութեան առողջական վիճակը չէր թոյլադրեր անոր ներկայ գտնուելու արարողութեան:

Սուլթանին անհանգստութեան մասին տարածուած լուրը ժողովուրդին մէջ մեծ յուզում առաջ բերաւ եւ ծրնունք տուաւ խեղճ տաղանդաւոր լուրերու, որոնք բարեբաղդաբար (!) չեն հաստատուած: Երբեք քեզիկէ ստացուած տեղեկութեանց նայելով, Սուլթանին հիւանդութիւնը ոչ մի անհանգստութիւն չի ներշնչեր?:

Պոլիս 11 օգոստ.

Սուլթանի առողջութիւնը ստացուած վերջին տեղեկութեանց նայելով, ոչ մէկ վտանգ չի ներկայացներ: Գաղափարատապէ մը, կը տառապի զի Սուլթանը չէր ուզած հետեւել կանխահոգ բժշկական դարմանումին:

Եւրոպացի նշանաւոր բժիշկ մը կանչուած է երբեք քեզիկէ: տես Դ. երկս

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Յուլիս 23ին հրատարակուած Տփղիսի թերթերէն կը տեղեկանանք թէ Շուշիի հետ հեռագրական հաղորդակցութիւնը կըրկին կտրուած է: այդ պատճառաւ բաւականաչափ տեղեկութիւններ կը պակսին:

Աղտամէն յուլիս 22ին կը հեռագրեն:

«Հեռագրութիւնը դէռ չէ կապուած: Այստեղ լուրեր ստացանք թէ ամբողջ գիշերը Շուշիի մէջ հրացանաձգութիւն տեղի ունեցած է: Շուշիի թուրքերուն և հայերուն մէջ դեռ հաշտութիւն չէ կայացեր: Այսօրուան համար որոշուած է երկու կողմերու ներկայացուցիչներու ժողով ընել հաշտութեան համար:

— Տփղիսէն մի քանի քահանաներու նախաձեռնութեամբ ընդարձակ գրութիւն մը շրջուած է Վեհ. Կաթողիկոսին, խնդրելով որ յետաձգուի կեդր. ժողովը գումարումը, և կը պահանջուի վեց թեմակալ առաջնորդներու հետ միասին քահանայական դասէն 12 ներկայացուցիչներ անդամակցին այդ ժողովին:

— Շուշիի դէպքերուն առթիւ Անդրկովկասի Շէյխ-Իւլ-Իսլամը և Միւֆտին ներկայացած են փո-

խարքայի օգնական Միգկէլիչին խնդրելով միջնորդել փոխարքային անյապաղ դադարեցնել տալու համար Շուշիի կոտորածը, ետ կանչել զօրավար Կոլոջայովը և դործը քննութեան ենթարկել: Փոխարքային օգնականը վճռական կերպով յայտնած է թէ զօրավարի տեղափոխութեան մասին խօսք ընել կարելի չէ. կոտորածը կը դադարի ուժով և կոտորածի պատճառ եղողները հասկնալու և զանոնք դատի կնխարկելու համար քննութիւն կը բացուի:

— Զարտախուէ կը գրեն թէ Ղատիր Բէրպէլա անուն ծանօթ աւազակապետը 500 ձիաւորով գաւառապետ Աւալիանու արտօնութեամբ յարձակած է Պատա գիւղին վրայ և աւերած, նաև կոշոպտած է Ղազախ քաղաքի, Տալար կայարանի, և Գետաբէկի խանութներու ապրանքները, որոնցմէ բաժին տուած է գաւառապետ Աւալիանին, Այդ թուրք աւազակը շատ մանուկներու ալ արիւնը թափած է գաղանային անխղճութեամբ:

— Շուշի գաւառէն Խորմոյթ գիւղի բնակիչներէն մօտաւորապէս 100 հայեր յարձակեր են յունիս ամսոյ մէջ Սէյիտլի և Չուժարմուխլու գիւղերու հովիւներուն վրայ որոնցմէ քչեր տարեր են 60 անասուն: Այդ դէպքէն քանի մը օր յետոյ խումբ մը թուրքեր յարձակեր են Սարուքէշիչ հայ գիւղին հովիւներուն վրայ և քչեր են 96 անասուններ, հովիւները փախչելով աղատեր են թուրքերէն:

Այսօրինակ դէպքեր դեռ անպակաս են Կովկասի շատ մը կողմերը:

ՌՈՒՍԻՆԻ ՊՈՐՏԵՐԸ

Ռուսիոյ նոր նախարարութիւնը կազմելու պաշտօն ստանձնող Սթոլիբինը կը ջանայ իր խոստումը կատարել, հրաւիրելով ծանօթ հանրային գործիչներ նախարարութեան պաշտօնի: Սթոլիբինի հետ բանակցութեան մէջ գտնուող անձ մը անցեալ շաբթու տեսակցութիւն ունեցած է Ռուս Ս. լրագրի մէկ խմբագրին հետ. անոր ըսածներէն կը հետեւի թէ հանրային ծանօթ գործիչներ պիտի մտնեն նոր դահլիճին մէջ հետեւեալ պայմաններով միայն:

1) Պետական Տումայի օրէնսդրական նիստը պէտք է սկսի սեպտեմբերէն ոչ ուշ:

2) Կայսերական ուղարկող շնչել մահուան պատիժը:

3) Պետական Տումայի մասին եղած օրէնքները պէտք է վերաքննուին, անոր իրաւունքները ընդարձակելու նպատակաւ, նոյնպէս պէտք է վերաքննուին Պետական Խորհուրդին օրէնքները, ասոր իրաւասութեան սահմանները կրճատելու նպատակաւ:

4) Գատարանները պէտք է վերակազմուին, հաշտարար հաստատութիւններու հիմքով:

5) Հրէաներու բնակութեանը համար հաստատուած սեղմ սահմանները պէտք է շնչուին և անոնց իրաւունք տրուի բնիկ ռուս տարրին հաւասար:

6) Զինուորական վիճակները և արտակարգ խտտութիւնները վերացուին:

7) Կառավարական ստորին պաշտօնատուներու մէջ՝ սահմանագիւղիներու մօտ տեղեր (ինչպէս Կովկաս, Լեհաստան ևն) ռուս:

լեզուի հետ գործածուի նաև տեղական լեզուն:

8) Ընդհանուր ներուժ շնորհուի, թէև ոչ լիակատար:

9) Անմիջապէս մշակուին օրինաբան գործադուլի, մամուլի ազատութեան մասին հայլն, ապագայ Տումային ներկայացնելու համար: Մամուլին միայն դատարանով պատիժ կարենալ սահմանել:

Նաքոտ լրագիրը կը գրէ թէ կոմս Վիթթէն՝ որ այժմ արտասահման կը գտնուի, իր թըղթակցութեանց մէջ սա համոզումը կը յայտնէ եղբւր. «Ռուսաստանը ներկայ միջոցի» պէտք է զսպել վճռական և հաստատուն միջոցներով: Կառավարութիւնը առայժմ յետադիմական ուղղութիւն պէտք է բռնէ և յետոյ միայն ընդարձակ բարենորոգումներ տայ:»

Պետական Տումայի անդամ Ա. լատինը յայտնեց է Պ. Թակէպ.

շատ լրագրի թղթակցին, թէ յաւաքիկայ նոյեմբերին Ռուսաստանի մէջ կը ծագի ընդհանուր յեղափոխութիւն, որուն կը մասնակցին նաև զօրքը և նաւատորմիղը: Տումայի անդամներէն շատերը այսուհետեւ կը գործեն իրենց յեղափոխական գօկիթէի անդամներ, մինչև որ Ռուսաստանի մէջ հասարակապետութիւն հրատարակուի:

Տեղեկութիւն առնուած է թէ մէկ քանի նահապետներու մէջ կըրկին գիւղացիական յուզումներ սկսած են: Ագարակատէրները

սարսափահար կը փախչին իրենց կալուածներէն:

Յուլիս 15ին Բեգրապուրի մէջ, առաւօտեան ժամը 11ին, Պուսսէլի տպարանն մտած են խումբ մը մարդիկ վեցհարուածներով շինուած: Տպարանին բոլոր մուտքերը կը դոցեն, անոնք կը կապեն տպարանապետը, գրաշարապետը և երեք վարպետներ: Իսկ գործաւորներուն կը հրամայեն փակել պատուհանները, դուրս չելլել և շարունակել իրենց աշխատութիւնը: Անծանօթները կը տպեն հոն Տումայի նախկին անդամներու կոչը ժողովուրդին 1,500,000 օրինակ, որ կը կրէ 220 պատգամաւորներու ստորագրութիւն: Իրիկուան ժամը 5ին գործը լնջուցած կը մեկնի խումբը իր հետ տանելով տպագրեալ կոչերը: Բայց հեռաձայն առաջ խումբը տպարանին բոլոր պաշտօնեաները տեղ մը գոցելով, քառորդ ժամ չը շարժիլ հրամայած է, որպէսզի անհետանալու միջոց ունենան:

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՆԵՐՈՒՆ ՀԱՍՏԱԳՈՒՄԱՐԸ

Հետզհետէ ժողովականներու թիւը կրտսեարանայ և նիստերը կանոնաւորապէս կը շարունակուին: Կրթական ծրագիրն է որ վիճաբանութեան առարկայ դարձած է հիմա: Երազրի ձեռնարկելէ տուա՞լ ուսուցիչներէն ու մանք ուղեցին հասկնալ թէ լոկ գիտութենէն պիտի առաջնորդուին, թէ ոչ պիտի հարկադրուին դպրոցին մէջ աւանդել վիճելի և խնդրական

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

ԱՒՍԶԱԿԱՊԵՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԿՈՏՈՐԱԾԵՆ ԵՐԿՈՒՆ
ՏԱՐԻ ԵՏԻԸ

Արեւը նոր ծագած էր չղթայ լեռներու լրայ, որոնք վանայ ծովուն հարաւակողմը կը տարածուին: Երկինքը պայծած էր: Դարունը սփռած էր իւր գեղեցկութիւնը չորս դին: Այդ պահուն ապառաժի մը տակ մարդ մը կանգ կ'առնէր: Յիսուսն անցած, բարձրահասակ, ոսկրուտ, թիկնեղ ու յաղթանդամ կ'երեւար: Լայն ու վէս ճակատ մ'ունէր, որուն խորշումները կը մթնային կարծես: Ալիսառն մօրուք մը՝ որ մինչև կուրծքին մօտ կ'իջնար, մեծ ու վեհ աչքերու հրաւառ նայուածքը խորհրդաւոր ու հմայիչ էր:

Հագած էր պարօնիկ ֆաբրիկայի յատուկ վերարկու մը, հնամաշ տիգրիկ մը եւ նախուսն չապիկ մը: Իսկ գրուիւրը դրած էր սղոտտ, գրէթէ կաշի կարած գտակ մը, որուն վրայ մետաքսէ թիկնով հիւստուած նկարներ կը նշմարուէին: Գալով ոտքերուն, պատուտած մուճակ մը կը ծածկէր:

Թիւէն կ'սկսած էր սեւ կտուէ տոպրակ մը, ու ձեռքը հաստ գաւազան մը կար:

Այս էր այդ հսկայ մարդուն ամբողջ ունեցածը:

Ապառաժին տակ նստելէն ու վայրկեան մը հանգչելէն ետքը, խորին տրամուլեմամբ մը ձեռքը ճաղատ ճակտին խորշումներուն վրայ դրաւ ու սկսաւ մտածել:

Ի՞նչ կը մտածէր:

Աստուած գիտէ...

Ու կէս ժամէն ետքը մեքենաբար ոտքի ելաւ ու չղթայ լեռներու ամենէն երկիւղալի կիրճին մէջ յառաջացաւ, որուն չորս կողմը հսկայ ապառաժներ, անտառներ ու թաւուտներ չըջապատած էին:

Երբեմն կանգ կ'առնէր, ուշադրութեամբ նայուածք գէպի կիրճին մթին վայրերը կը սեւեռէր, բան մը փնտռելու պէս չորս դին կը դիտեր եւ չը

կրնալով ինքզինքը զսպել, ակամայ հառաչանք մը կը հանէր բնէն...

Երբեմն ալ օձապոյտ ճտմբէն շեղելով, անտառին ապառաժներուն մէջ կը յառաջանար ու աւելի հեռուները կը դիտէր:

Այս պէս, ամբողջ օրը մթնոց կիրճին մէջ, վերջալուսի ատեն, պաղուկ աղբիւրի մը մօտ նստած պատառ մը հաց կերու ու շարունակեց ճամբան:

Լուսին չըկար, բայց երկինքը վրձն էր ու աստղերու լոյսը կը ցոլար:

Կէս գիշերուան մօտ, անծանօթ մարդը վանայ քաղքէն... Ժամ հեռաւորութիւն ունեցող հայաբնակ գիւղ մը հասաւ:

Շուշիքը սկսան հաչել: Մարդը՝ փոխանակ գիւղը մտնելու, քիչ մը հեռու գտնուող վանքը գնաց:

Վանքը պարիսպով մը ծածկուած էր ու միայն դուռ մ'ունէր, որ գոց էր: Փռնած տեղ քանի մ'անգամ դուռին զարկաւ, բացող մը չ'եղաւ: Հետեւաբար թիւէն վար առաւ տոպրակն ու նստեցաւ պարիսպին մէկ անկիւնը:

Ի՞նչու պարպաւոր կը յոգնիմ, միմիջեք մարդը խորին դառնութեամբ մը: Արդէն կէս գիշերն անցած է եւ

քիչ ետքը լոյսը պիտի ծագի: Աւելի աղէկ է այս տեղ սպասել...

Ու տոպրակը գլխին ներքեւ դնելով քանի մը ժամի չափ քնացաւ:

Դե՛ռ լոյսը չը ճեղքուած: չուտով մը պատրաստուեցաւ ու վանայ քաղաքը տանող ճամբան բռնեց:

Ի՞նչքէն գուրս, ընդարձակ ու ծովուն վրայ նայող արուարձան մը կար, ուր թուրքերը կը բնակէին: Երբ այդ արուարձանը հասաւ, պահ մը կեցաւ ու նորակառոյց ապարանքներուն նայեցաւ:

Օ՛հ, ի՞նչ մեծ փոփոխութիւններ... Ըսաւ անծանօթ մարդն ինքնիրեն: Թափուած արիւնը պալատներ չ'ինած է այս երկրին մէջ: Աստուած իմ:

Ու չը կրնալով հոգեոյն խռովիլը զսպել, վրէժնեղութեամբ լեցուած «օֆ...» մը քաշեց:

Յետոյ քաղաքը մտաւ:

Յառաջացաւ գէպի ներքին չուկան, ուր ատեն մը կենդանութիւն կը տիւրէր եւ առեւտուրի տեսարանը գրէթէ զուարճութիւն մըն էր: Բայց հիմա՞... օ՛հ, հիմալ գէպի էր տեսարանը: Կենդանութիւնը մարած էր եւ ամենուն ղէմքին վրայ երկիւղալի ստուէր մը կը նշմարուէր:

Չը կրցաւ... արագ արագ դուրս

նիւթեր ալ : Երկար վիճարանութիւններէ ետքը , Համագումարի մեծամասնութիւնը որոշեց թէ կարելի չէ տակաւին կրթական ծրագրէն դուրս հանել այնպիսի առարկաներ որոնք հանրութեան համար նուիրական են :

Ըստ նորագոյն մանկավարժութեան , նախնական կրթութիւնը պարտաւորիչ է եւ կը տրուի թէ՛ մանկավարժներէ եւ թէ՛ տարրական նախակրթարանին մէջ : Տղան 5-7 տարեկան՝ պիտի մընայ մանկավարժէզը : Իսկ 7-13 տարեկան հասակը՝ պիտի յաճախէ նախակրթարան , որ երեք դասընդացք պիտի ունենայ : ստորին , միջին , բարձրագոյն :

Նկատելով որ մինչեւ ցարդ մանկավարժէզը , դրամական տեսակետով , մատչելի չէ եղած , Համագումարը միաձայն որոշեց հոգաբարձութեանց ուշադրութիւնը հրաւիրել այս կէտին վրայ եւ խնդրել իրենցմէ որ չափաւոր ամսադրօշակ պահանջն ժողովրդին զաւակներէն :

Բարձրագոյն գոծածութիւնը , առողջապահական տեսակետով , վնասակար նկատուեցաւ : Բայց որովհետեւ անոր տեղը բոնորդ ուրիշ առարկայ մը չի կայ , որոշուեցաւ առայժմ գործածել զայն :

Մանկավարժէզի մէջ , հաճելի եւ զբոսալի եղանակով մը պիտի կրթուին աղաքը : Բնաւ չպիտի կարգան եւ չըպիտի գրեն , այլ իրենց մայրենի լեզուն պիտի վարժուին : Իրեւն վնասակար դաս , կըսուոր շարժումները պիտի վերանան :

Լեզուներու աւանդման ատեն , ընդհանուրէն մասնաւորին երթելու մէթոտը պիտի գործադրուի : Գիծերու միջոցաւ , տղան պիտի ոտրվի խօսքը եւ իր մասերը , վանկերը եւ տառերը : Նախակրթարանի առաջին տարուան կէսը՝ լոկ խօսելովարժութիւնը պիտի շարունակուի , իսկ միւս կէտին մէջ՝ տղան պիտի սկսին կարդալ եւ գրել :

Վեց տարուան մէջ , հայ տղան պիտի ուսանի իր մայրենի լեզուով գրել , կարդալ եւ խօսիլ : Բարձրագոյն դասընթացքի մէջ , պիտի աւանդուի գրագիտական տարրեր եւ հայ մատենագրութեան համառօտ պատմութիւնը : Գալով գրաբարին՝ տղան անոր ա՛յն

ձեւերը միայն պիտի ճանչնայ որոնք աշխարհաբարի մէջ կը գործածուին :

Տարրական դասընթացքի Բ. տարիէն սկսեալ մեծ խնամքով պիտի աւանդէ պուկար լեզուն , այնպէս որ հայ տղան պիտի կարենայ Գիմնազիան մտնել՝ առանց դժուարութեան բաղխելու : Նախապէս , տղաքը կէս տարի խօսելու պիտի վարժուին եւ ապա պիտի կարդան եւ գրեն :

Միեւնոյն մեթոտով պիտի աւանդուի Ֆրանսերէնը՝ միջին դասընթացքի Ա. տարիէն սկսեալ :

Դասերու արտագրութիւնը՝ տղոց համար տաղտկացողիչ եւ մեքենական բան մը ըլլալուն՝ Համագումարը միաձայն որոշեց վտարել զայն հայ նախակրթարաններէն :

30 յուլիս 1906

Վասնա

ԿՈՒՆ

ՆՊԱՍՏ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Ա. Զ. Դ.

Նկատելով Վասպուրականի մեր եղբայրներու վիճակին օր ըստ օրէ ծանրանալը ներկայիս կուգանք ծանուցանել Վառնայի հայ հասարակութեան որ Գողթան երգ. թատերախումբըս որոշած է մօտ օրէն ներկայացնել ի նպաստ Վասպուրականի սովեալներուն :

ԱՐԻԻՆՈՏ ՀԱՐՍԱՆԻՔԸ

սղերեգ. 4 արար ներկայ կեանքէ Լիայոյս ենք որ Վառնայի հայ հասարակութիւնը ինչպէս ուրիշ անգամներ նոյնպէս եւ այս անգամ պիտի գիտնայ քաջալերել մեր այս օգտակար ձեռնարկը :

Վարչութիւն

Գողթան երգ. թատերասէր խումբի Ատենադպիր Վ. Ասենապիտի Վ. Բաշաեան Հ. Համբարձումեան * *

եւաւ ներքին չուկային ու նպարավաճաններու բաժինը մտաւ : Պահիկ մըն ալ այդ կորովի մարդերու նկարագիրը դիտեց :

Ո՛հ , կորովը չ'էր մնացեր այդ յաղթանդամ մարդերու նկարագրին մէջ : Մտաւայի մը պէս կեցած էին իրենց գործին զլուխը :

— Տխու՛ր բան է աս ... նկատեց անծանօթ մարդն ինքնին : Կարծես թէ կեանքը սեռած է այս քաղաքին մէջ ... ու ես գերեզմանոց մը կը գլուխուիմ :

Արցունքը լեցուեցաւ դէմքը ծածկող խոր խոր մօրուքին մէջ ու դառնացուց իր հոգին :

Ժամը չորսին կը մօտենար : Պարիսպին մեծ Դուռնէն դուրս նստուեցաւ ու Աւանց կոչուած արուարձանը գընաց :

ՆԱԽԱՎԱՐԸ

Անծանօթ մարդը , ֆաբրիկ մը տալարով , բարձր ու ճաշակաւոր դուռի մ'առջին կանգ առաւ : Դուռնին քով կը կենար կուստիլը հասակով , արիւնաթոյր ալտերով , ճաղատ ճակատով ,

ՍՐԱՀ ՍԱՒՏՆԵՐԻ

Վառնայի հայ երիտասարդ. Թատերասերաց «ՄԱՍԻՍ» խումբը յառաջիկայ Օգոստ. 10ը հինգշաբթի գիշեր պիտի ներկայացնէ , ի նպաստ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԱՐՈՏԵԼՈՑ

Առաջին անգամ ըլլալով

ԱՐՇԱԿ Բ.

Ողբերգութիւն 5 արար. անմահ Պէշիկ խաչիկանի հեղինակութիւններէն : Ողբերգութենէ վերջ նաեւ խիստ ծիծաղաշարժ գաւիշտ մը պիտի ներկայացուի հայերէն լեզուաւ :

Վարչութիւն

«ՄԱՍԻՍ» Թատերախմբի

— * —

Ինչպէս երկրորդ ծանուցումէն կը տեսնուի , քանի որ Մաւիս խումբը պատրաստուած է օրը որոշած ու սրահը վարձած է նոյնպէս ի նպաստ Վասպուրականի մեր դժբաղդ արիւնակիցներուն ներկայացում մը տալու , լաւագոյն պիտի ըլլայ որ Գողթան խումբն ալ իր ջանքերը միացնէ Մաւիս խումբի ջանքերուն , աւելի արդիւնաւոր եւ փառաւոր ընծայելու համար ներկայացումը : Այս կերպով երկու անգամ սրահի եայլնի ծախքեր ընելու եւ հաւաքուելիք դրամին մէկ կարեւոր մասը յումայէտս մխելու անպատեհութենէն ազատած պիտի ըլլան :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Աղէքսանտրիայէն Բարթող փաշա 8200 ֆր. զրկած ըլլալով Հայրիկին , ի նպաստ Կովկասի կարօտելոց , Նսրին Վեհափառու-

թիւնը օրհնութեան կոնդակ մը զրկեր է : Փաշան մտադրած է նոր հանգանակութիւն մըն ալ ընել , մասնաւորապէս հարուստ հայերուն դիմելով :

— Պալատէն տրուած խոստումներուն հաւատք ընծայելով , Օրմանեան իր հրաժարականը ետ առաւ : Բայց այդ խոստումներէն ոչ մէկին գործադրութիւնը չը տեսնուիր ցարդ :

Հայոց Պատրիարքին պահանջները քննելու համար , կազմուած յանձնախումբը որ կը բաղկանայ Նէճիպ Մէլիամէյէ , քաղաքապետ Բէշիտ փաշայէ եւ Բետայի կառավարիչ Համտի պէյէն , ոչ մէկ վստահութիւն կը ներշնչէ :

Գաւառներու հայերուն արդիւնուած է ճամբորդել . շատեր կը բանտարկուին առանց քննութեան :

— Կիրիկիոյ Աթոռին մատակարարութիւնը բաւական բարւոքուած ըլլալով , յառաջիկայ սեպտեմբերին ժառանգաւոր աշակետներուն թիւը աւելցնելով մէկ երկու ուսուցիչ բերելու մտադրութիւն կայ : Ս. Կաթողիկոսը այս նպատակաւ կարեւոր ձեռնարկները կ'ընէ եղբր ոյս միջոցին :

«ԻՐԱՆԻՆԻ» ի պատասխանները

Ոյեագիլ (Երուսաղ) Տ. Գ. Գորոհաւն — Շնորհակալութեամբ ստացանք 30 ֆր. նոց չէքք , եւ արձանագրեցինք Մանուէլ Ի. Տօմիկո անունին , քանի որ թերթը այդ հասցէով կը ղերկուի :

Գաւառի Տ. Գ. Աւեսեան — Դիրքերը ղրկեցինք ծրարով մը :

տուաւ թուրքը : Եթէ ատանկ չըլլայ կեանքը մեր երեսն անգամ չը նայիր : Կարելի է իմացած ես ... ինչեւ ընել չուզեցին : Փառք Աստուծոյ , երկու տարի է որ ձան ձուն կտրեցաւ ու սառած օձի պէս ուժ չէ մնացեր վրանին որ զլուխ բարձրացնէ : Ըստ իս , սա սպտակը բաւական է ատ կեանքներուն մինչեւ հարիւր տարի :

— Ի՞նչ ... թոթովեց անծանօթ մարդը խեղդելով իր մէջ գերագոյն ցաւի մը զառնութիւնը :

— Կեանքը ... վրայ բերաւ թուրքը խորին ատելութեամբ մը : Միշտ հանգիստ ապրելու չէ ... իր հացին մէջ աչքը մնալու է ... եթէ ո՛չ կառավարութիւնը չը ճանչնար ու մեր օրէնքներուն գլուխ չի ծռեր :

— Այդչափ վնասակար ազգ մընէ , հարցուց անծանօթ մարդը՝ չ'կրնալով ինքզինքը զսպել :

— Հա՛յ հայ ... միտակ թէ , ինչպէս ըսի , զլուխ բարձին վրայ չ'ենք թողուր : Անասուններու պէս կ'աշխատեցնենք : Իր վաստակը մենք կուտենք , իսկ քրտինքը՝ կը մնայ իրեն :

(Շարունակելի)

— Է՛հ կեանքին վաստակը մերն է , բարեկամս , ինչ ընենք , նկատել

ՍՈՒԼԹԱՆԸՆ ՎԵՃԱԹԸ

Սօն ճուճա էրթէսի կիւնքի
Հօյտ վաթօրընտան ալտըղմըզ
հաւատիսաթ էքսէրիէթէն թէ-
լէկրափլարիէ թասթիգ օլընիյօր
իսէտէնեալընը Սուլթան Համի-
տին էօլմիւշ օլմասընըն մէսէր-
րէթպախշ հաւատիսինէ պիր ազ
աճէլէ օլընմուշ կէօրիւնէօր :
Անըն ճամիյէ կիթմէզ, եաթագ-
տան գալգմազ վէ հէր պիր տէ-
լիկինտէն գանլոր տըշարը վէ-
րիւր տէրէճէտէ խասթա օլտըղը
վէ տօթթօտլարըն պըշպալարը
ալթընտա էօլմէք իւզրէ պուլըն-
տըղը, վէ պու եօլտա՝ մարաղը
մէվթինտէ պարի՝ գըրտըրտըղը
իւլպինտէն պիկիննահլարըն
չէքտիկի ազապ ու բէնճիտէլէր-
տէն քէնտիսի տէ լազէթեապ
օլարագ րուհընը էյատէի շէյա-
թին է թէսլիմէ միւսթահագ օլ-
տըղընտան տօլայը բէք մէսրու-
րըզ :

Սքանպօշ 31 յուլիս

Երլտըղտան ալընան խապէր-
լէր Սուլթանըն հայաթը իչուն
հէյէճանը, տըրլար: Պաղըլար
Սուլթան էօլմիւշ տէյօրլար, պա-
զըլարը սախի իճրա օլընան օ-
բէրասիօնա տալանմազ տէյօրլար:
էօլմէսի բէք եազըն տըր Վիտըղ-
տա թէլաշ պօյիւկ տիր, Գիմսէ
Բաշիտ էֆէնտի իչիւն պիր սէօզ
իթմէյօր: Սուլթան քիւշիւք-
մախտուլը Պիւհանտոտինին թախ-
թա ճիւլիւսինի վասսիէթ իթմիշ
տիր Վեուսթի իզգէթտինին թա-
րափտարլարը ճէպրի սուրէթտէ
անըն հագգընմուհագա իտէ-
ճէքլէրինի սէօյլէյօրլար:

Ճամիլէրտէ կիզլի պիր շէյիչիւն
հազըրըզ վարտըր: Սուլթան
Համիտին սալիֆի հէր քիմտէ օ-
լուր իսէ, իթիւլալըզ թախթա
օթուրամալաճաք տըր, Պուրատա
էլիլէրին մայէթ վաթօրլարընըն
ավտէթի պէքլէնիլիյօր:

ՏԱԽԻԼԻԷ

Պուրկազտան ալընան թէլէ-
կրափլար Ահեօլու շէհիւրին ալ-
էֆլէր իչինտէ պուլընտըղընը,
թէլէկրափ խաթլարըն քէսիւ-
միշ օլուպ րուխապէրաթ գաթ
օլընտըղընը, րուլ մէտրօթօլտին
200 քիշի իլէ քիւլէսէտէ սըղըն-
տըղընը վէ գուրշուտան վէ եան-
կընտան բէք չօգ ատամլար թէ-
լէֆ օլտըղընը պիւտրիյօրլար
թափսիլաթ եօգ տըր:

— Այտօտա Գարնապատտա սախի
Րուլարա գարշը միթինկիւր
օլմուշտըր, պախուսուս Գարնա-
պատտա սիւվարի ասքէրլէրի ասա-
իչին իպգասը իչիւն միւտախէլէ
ի տուպ, աթէշէ տալրանմըշլար,
ինսան թէլէֆիաթ ըեօգ մըշ:

— Սեպտեմ իպթիտալարընտա պէ-
յիւկ պիր ասքէրիլէ մանօլրասը
իճրա օլընաճաղը հարպիլէ նէզա-

րէթինճէ մուգարէր իմիշ, իչպու-
մանօլրատա Սօֆիանըն, թրա-
քիանըն վէ Րիւանըն իւշֆըրգաի
սաքէրիէլէրի իշիթիւրաք իտէ-
ճէքլէր:

— Բազար կիւնիւ շէհրիմիզ
«Սաէտինէնիէ» սալօնընտա սօսի-
ալիսթլէր խալլը գալապալըզլէ
պիր մէճլիս իտուպ նութգլարլէ:
Պուլկարիտա Րուլարա գարշը
իտիլէն թէճալիւղաթըն ինսա-
նիլէթ նօզթաի նազարընտա
եազըշըգաղ օլտըղընը պէյան
իթմիշլէր, Բազար էրթէսի կիւնիւ
տախի սօսիալիսթլէր թէքրար
մէքըլուր մահէլտէ նութգլար
սէօյլէտիքլէրի էսնատէ,
հաղըրըզլէ կէլմիշ օլան Մակէ-
թոնիալըլար վէլլէլէ գալտըրուպ
արատան ըշօլլէր տարպէլէրի
միւլպատէլէ իտիլմիշ վէ 4-5 կէնճ
եարէլէնմիշ վէ իքիսի էօլմիւշ
տիր, Ժանտարմա տէրհալ եէթի-
շուպ, գալապալըղ տաղըթմըշ վէ
միւթէճասըլարը թաագիպ իտէ-
րէք՝ շէհրին ասալիչինի մուհա-
ֆաղա իթմիշտիր: Սօգադտա եա-
լընըզ պիր քիշի թաշլարլէ գա-
ֆասընտան եարէլէնուպ էօլմիւշ
տիր, Բօլիսիա թագիպաթա տէ-
վամ իտէյօր:

— Բուսնուգտա բազար սապահը
սաաթ 9-11 րատտէլէրինտէ Ալէք-
սանտր մէյտանընտա պիր պէօյիւկ
միթինկ թէճէմմիւ օլընմըշ վէ
Րուլարա գարշը նաթգլար սէօյ-
լէնիլմիշ վէ էհալի «քահր օլսուն
Րուլար» պաղըրմըշ օլտըղտան
սօնրա մուզիք չալընմալա պաշա-
մըշ վէ միլլի պալարագ էօնտէ օլտը-
ղը հալտէ 6-7000 քիշի սօգաղարը
կէզուպ նիւմալիշ տէվամ իթմիշ
տըր:

Նիւմալիշէր պաղը զէնկիւն Րուլ
թիւճար վէ պանգէրլէրին խա-
նէլէրինէ հիւճուլ իթմիշլէր վէ
պիր քաշ րուլ տիւքիանը գըր-
մըշլար վէ իչէրտէքի էչեալարը
սօգաղա աթմըշլար, Հիւքիմէթճէ
իթիլիաղ օլընան թէտպիլէր
սալէսինտէ ասլա ինսան թէլէֆի-
աթը օլմամըշ, քէզա Եունան
գօնսօլոսհանէսի ասկէրլէ մուհա-
ֆաղա օլընտըղընտան՝ նիւմալիշ-
էրլէրին օլ թարաֆա կիթմէլէրի
մէնն օլունմուշ տըր: Եալընըզ
գօնսօլոսհանէ իւզէրինտէ չէքիւ-
միշ օլան Եունան պանտէրասընը
էնտիրմէկէ գօնսօլոս մէճպուր ի-
տիլմիշ տիր:

— Սեպտեմ 3 տէնճ գատար Սօ-
ֆիատա Եունազ շիւքէթին թէր
թիպի իլէ բէհլէվան կիւլէշլէրի
օլաճագ: Պուլմագսէտլէ պիւթիւն
գաղալարա իլան օլընտըքի բէհլի-
վանլարա պիւտրիլիսին: Կիւլէ-
շէնլէր բարսա թօթլամազտան
մատա պէշ քիշիլէ 3000 տէն
50 ֆրանգա գատար պախշիշ
վէրիլէճէք:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Էվրոբատաքի Եունան էլիլէրի
քէնտի հիւքիւնմէթլէրինտէն ալ-
մըշ օլտըղլարը թալիմաթ իւզէ-
րինէ, Պուլկարիտա Րուլարա
գարշը իճրա իտիլէն թագիպաթ-
տան տօլայը շիքեայէթլէ, տէվ-
լէթլէրին նազարը տըգգաթընը
տալլէթ իթմիշլէր վէ Պուլկար
հիւքիւնմէթլէրին թուլտըղը վա-
ղիլէթինէ գարշը ըրօթէսի էյ-
լէմիշլէր, վէ րուլ քիլիսէլէրի-
նին զապթ իտիլմէսի Պէրլին
ահտնամէսինին պէշինճի պէն-
տինէ մուղայիւր օլտըղընը պէ-
յանլէ՝ տէվլէթլէրի թէվասուլթ
իթմէսինի Եունանիտան թալէպ
էյլէմէքտէ իսէտէ՝ Վիէննա գա-
պիւնէսի նիւմալիշլէրին սօնու-
նէ օլաճաղընը պէքլէմէքտէ օ-
լուպ, շիմտիլիք թէվասուլթ իթ-
մէյէճէք կէօրիւնիլիյօր:

Պուլկար հիւքիւնմէթի պուլ-
տան պէօյլէ Րուլարա ալէյհիւ-
տէ թագիպաթ վուգու պուլ-
մալաճաղընը վէ սօն տէֆա
Րուլարա զարար իտէնլէրին ճե-
զալանաճաղընը վատ վէ թէմին
իթմիշ:

— Շու կիւնլէրտէ ճիզլիթ թա-
պիր օլընան կաթուղիլ րահիպլէր
«Գարա Բաբայը» ինթիխապ իթ-
մէք թէշէպպիւսինտէ տիրլէր:
Ճիզլիթ Բաբայը օլան զաթըն
ինթիխապ տախի ասըլ Բաբա-
նըն ինթիխապ շէքլինտէ իճրա
օլընըյօր, Եանի հէր միլլէթտէն
ճիզլիտլէր Գօնգլավա տախիլ օ-
լաճագալ: Գօնկլավա կիրէն րա-
հիպլէր թախսիս օլընան տաիրէ-
տէ գաղալու գալաճագլար ին-
թիխապ խիթամ պուլանա տէկին:

ԲՈՄԱԹԻՉՄԻ ԴԵՂ

Մարմնոյ որեւիցէ մասին մէջ յօդա-
ցաւ «սըզի» «քամի ունեցողները պէտքէ
գործածեն այս վանա ծամոնը «եաքըն»
որուն օգտակարութիւնը հարիւաւոր-
ներէ վկայուածէ: Պէտքէ տաքցնել եւ
կապել ցաւած տեղը, երբ ցաւն ան-
հետանայ, ծաման ինքիւրեն կը փրթի,
մարմնոյն վրայ աւանց հրաք մը թող-
նելու:

Գիննէ 3, 20 եւ 2 20 ֆր, կանխիկ
պուլկարա կաննամակաւորոյմ կընտու-
նի:
Գիմիւ առ
8, 4, ձանկիւլիւն վառնա

ՕԹԵԼ ՍԱՊ ՍՈՆ

ԱՂԵՔՍԱՆՏՐԻԱ


Ճամի քեպանաի դէմ քիւ 18

Տխար Ս. Շէքրեանի վարչութեան
տակ գտնուող այս ծովեզերեայ եւ
օղաւէտ պանդօկը իր մաքրութեամբ
եւ ամեն կատարելութեամբ յանձնա-
րարելի է մէր հայրենակիցներուն: Այ-
ցելուն հոն կը գտնէ նաեւ մաքուր
ճաշարան մը արեւելեան եւ եւրոպական
ճաշակով մաքուր եւ համաթամ կերա-
կուրներով, Գինները չափաւոր են:

ԱՌԻԹԵՆ ՕԳՏՈՆԵՏԻ

Պուլկարիայէն մեկնելու առթիւ կը
ծախուի ջնջին գնով փոքրիկ գործարան
մը:
Այս գործարանը ամբողջ Պուլկարիոյ
մէջ միայն մեկ հատ ըլլալուն՝ մրցող-
չուն իր դեմը: Առնողին պիտի սոր-
վեցնէ թէ 2 մեքենաներու գործածու-
թիւնը եւ թէ արհեստը որ կանանց
համար աւելի լարմար աշխատութիւն մէ:
Գիմիւ 5 երրորդ ուշասթ, ուլիցա
Ասէնօվա թիւ 17 ժամը 2 էն մինչեւ 4:

Одговорникъ А. Курбетиянъ
вспомогательн. А. Тодоровъ С. не—Варна



Բարիգու ժընէվի եւ Պուլքսէլիցուցահանդէսներուն մէջ մեծագոյն պարգեւներ
ստացող ու համաշխարային գնահատման բարձրագոյնին արժանացող այս ժամա-
ցոյցի գործարանը «ՕՄԵԳԱ» իրօք իր անունը արդարացուցած է իբր ճարտա-
մասին ետը կատարելագործութեանց վերջին աստիճանին ՕՄԵԳԱ ին հասցնող
հաստատութիւն մը:
Այս հռչակուող Գործարանին ներկայացուցիչն է Տ. Յակոբ Թօսպըղեանի վա-
ճառատունը, ուր կը գտնուին «ՕՄԵԳԱ» ժամացոյցներու բոլոր տեսակները, ոսկեայ,
արծաթեայ եւ պողպատեայ ամեն չափէ ու մեծութենէ. Գիները ՉԱՓԱԻՈՐ:
Կը գտնուին նաեւ Պուլկարիոյ բոլոր կարեւոր ակնավաճառներու եւ ժամա-
գործներու քով: